

ՄԱՍԻՍ

ՀԱՆՔԵՍ

ԱԶԳԱՅԻՆ, ԳՐԱԿԱՆ, ԳԻՏԱԿԱՆ ԵՒ ՔԱՂԱՔԱԿԱՆ

ԿԵ ԶՐԱՏԱՐԱԿՈՒԻ ՍՍԵՆ ԾԱԲԾ ՕՐ

ՏՆՕՐԷՆ - ԽՄԲԱԴՐԱՊԵՏ
ԴՐԻԴՈՐ ԶՕՀՐԱՊ

ՏԱՐԵԿԱՆ ԲԱԺԱՆՈՐԴԱԳԻՆ

Պոլիս եւ Գաւառներ 40 Ղրուշ
Ռուսաստան 4 Բուպի
Եւրոպա 10 Ֆրանք

ՀԱՍՑԷ

Ղալաթիա, Իզմիրի Օղլու խան, րիւ. 3-4

ՀԱՒԱՏՔԻ ՊԱԿԱՍԸ

Յաւով կը տեսնենք հիմայ որ մեր
գալրոյններէն թերահաւատ ու սկեպ-
տիկ տղաքներ դուրս կ'ելլեն միայն:

Պզտիկ հեգնական ժպիտ մը ունին
իրենց տժգոյն շրթանցը վրայ. միամիտ
կը գտնեն զմեզ. հաշիւի ու ապացոյցու-
թեան պէս բառեր ունին բերաննին:

Գրական կեանքի կապուած հոգի-
ներ են աչ ու շ, անհատական չնչին
պաշարներով զբաղած բոլոր, ու անկէ
դուրս աշխարհի մը գոյութիւնը ուրա-
յող:

* * *

Մեր գալրոյններէն մաքի տէր տղաք-
ներ կրնան ելլել այսուհետեւ, բայց կը
վախնամ որ սրտի տէր ոչ ոք դուրս
դայ. տրուած դաստիարակութիւնը,
տեսնուած օրինակները, խարխափու-
մի աշխարհ մը ստեղծած են ասոնց
չուրջ: Շիտակ խօսք մը իրենց ականջին

հասած չէ, անկեղծ ձայն մը իրենց
սրտին չի խօսիր. օրինակելի կեանքեր
քիչ կրնանք յուշենլ իրենց. միայն
հաշուի մարդ ըլլալ պատուիրուած է
իրենց ու պէտք եղածէն աւելին ե-
ղած են:

* * *

Արդարեւ նախորդ սերունդնե-
րուն հաւատքն անդամ աւելի ա-
ւանդական բան մըն է քան թէ բար-
ձր ընթերցումը կրօնքին: Մտէ՛ք ա.
մեն խաւերուն մէջ, պիտի գտնէ՛ք
մարդիկ որ կրօնքին կապուած ըլլան
հոգեկան դահացումի մը պէտքով:

Ես կարող եմ յուշենլ որ այդ բո-
լոր բարեպաշտները աւելի յաւիտենա-
կան գեհենի մը երկիւղէն բռնուած,
այդքան ջերմեռանդն են քան թէ ճըշ-
մարիտ հաւատքի մը բերմունքով, և
ուրիշներ որ իրենց տունի, տեղի, խա-
նութի գործերուն յաջողութեան հա-
մար միայն կը դիմեն Աստուծոյ ոտքը:

Ագոնք հաւատացեալներ չեն, ու-
միկ շահագէտներ են:

* * *

Ու երբ հաւատքը նուազի, գիտցէք որ բարոյական կեանքը կը տկարանայ. ինչ պիտի գնենք անոր տեղը. գիտութիւնը. բայց իմաստականեր ունինք շուրջերնիս և ոչ գիտուններ. խղճմտանքը. բայց խղճմտանքը երբէք մեծ յաղթող մը եղած չէ աշխարհիս մէջ:

Առաջին ուսումը որ պարտինք սորվեցնել այսուհետեւ նոր հասնող սերունդին, հաւատքի ուսումն է:

Եթէ մեր եկեղեցականութիւնը անտարբեր կերպով հանդիսատես կ'ըլլայ, երբ հաւատքին բարոյական ոյժը կը տկարանայ մեր մէջ, մեղի կ'իյնայ անոր բարոյացուցիչ դերը մատնանիչ ընել հանրային կեանքի համար:

ԱԶԳԱՅԻՆ ՀԻՒԱՆԴԱՆՈՑ

Համարման տօնին օրը, Ազգ. Հիւանդանոցի մէջ՝ Հոգաբարձութեան կողմէ կարդացուած տեղեկագրէն կը քաղենք հետեւեալ շահեկան մասերը.

Սոյն հաստատութիւնը խարխուլ և քայքայման վիճակի մը հասած լինելուն՝ ի նորոգ կառուցման համար յանձնաժողով մը կարգուած էր 1888 օգոստոս 17ին:

Հին շէնքն կը պարունակէր արանց եւ կանանց համար՝

Առաջին՝ հիւանդարան

Երկրորդ՝ յիմարանոց

Երրորդ՝ ծերանոց

Չորրորդ՝ օրբանոց

Սոյն շէնքերն փլցուելով նոցա տեղ երկու նոր շէնքեր կառուցուած են, որ բաց ի սրբանոցէ միւս մնացեալներն այժմ այդ շէնքերուն մէջ պատասպարուելու հարկադրեալ են:

Յիշեալ յանձնաժողովոյն միջոցաւ այժմ բաշխիք և լուսացարան կը շինուին, որ մօտ օրէն կաւարտին:

Յայնժամ պատասպարիոց թիւն 645 էր, սակայն այժմ 775 հոգիք կան, և մարտ ամսոյ մէջ 842 անձինք կը գտնուէին, որոյ նմանն արձանագրութեանց մէջ չէր տեսնուած:

Որբանոցի ուսանողք այն ատենէն ի վեր

կը գտնուին Ս. Յակոբայ վանուց մէջ, ուր շինուած է մի նոր ննջարան, սակայն ինչ ինչ բանաւոր պատճառներով Հոգաբարձութիւնս որոշած է այժմ գանոնք նոր շէնքին մէջ փոխադրել տալ մինչ ցկառուցումն Որբանոցի, և այդ շէնքին մէջ գտնուած ծերերն, ինչպէս նախ տղաներուն մի մասն ի Ս. Յակոբ:

1891 նոյմ. 15ին պատասպարիոց թիւն էր 764. սոյն թուականէն մինչեւ 1893 ապրիլ վերջ ընդ ամենայն 3941 անձինք ընդունուած են, որոց 3487 հիւանդ, 117 ծերք և հիւրք, 165 յիմարք և ապուշք, 134 տղայք և աղջկունք, 38 պաշտօնեայք:

Հիւանդներէն առողջացած կամ բարելաւած 3045, յիմարներէն մեկնած 85, ծերերէն 45 արձակուած, տղայքներէն դացած 151, պաշտօնեայններէն 40, իսկ մեռնողներն են 416 հիւանդ, 60 յիմարք կամ ապուշք, 77 ծեր կամ անդամաւրջ, 7 տղայք և չորս պաշտօնեայք:

Մեռելոց թիւն հարիւրին 14.35 է, որ գահացուցիչ կը նկատուի:

Ապրիլ երեսունին հաստատութեանս մէջ կը գտնուէին.

	Արդ Կանայք Գոհմարդ		
Հիւանդք	153	28	181
Յիմարք և ապուշք	164	63	227
Ծերք և անդամաւրջք	80	29	109
Որբք	175	17	192
Պաշտօնեայք	64	2	66
	636	139	775

Հոգաբարձութիւնս Հաստատութեանս ելեւմտից մատակարարութեան ելմտացոյցը շինած և Ազգային կեդրոնական վարչութեան Պատկառելի Բաղաքական Ժողովոյ մատուցած է ի վաւերացումն:

Հաստատութեանս մէջ միջին հաշուով 800 անձինք կը պատասպարուին և սոյն թուոյն վրայ հաշուելով ելմտացոյցն պատրաստուած է:

Տարեկան եկամուտն է 720,553 զրշ. որոյ մէջ Վեհափառ Կայսեր շնորհը մեծ բաժին ունի, և ծախքն 971,550 զրշ. որ ըսել է, միշտ բաց կուենամք 250,000 զրշ.

ՕՏԵԱՆԻ ՆԵՐՔԻՆ ԿԵՂԷՐ

Ե

1870էն մինչեւ 80 թուականը Օտեան բնակեցաւ Բերա: Իր հին բարեկամներէն, պատանեկութեան բարեկամներէն, շատերը մեռած էին. Պալեան, Աղաթօն, Պարտիզպան, Բարունակ, Պէշիկթաշեան: Նորագոյն բարեկամներ ունեցաւ անոնց տեղ «որք Բարունակին սօսկի սիրտն ունին, կամ Պէշիկթաշեանին գողար ու փափուկ զգացմունքը կամ Նիկողոս Պալեանին յալիտակութիւնը», ինչպէս ինք կը գրէր: Օտեանի մեծագոյն հաճոյքն էր այդ բարեկամներու հետ տեսակցութիւնը: Բերայի մէջ, շաբաթը զիշեր մը ընդհանրապէս կը գումարուէին իր տունն և «Էֆէ խաղալով՝ այլ մանաւանդ խօսակցելով ժամանակ կ'անցնէին: Տօք. Քեաթիպեան, Սաքըզ Յովհաննէս էֆէնտի, Կարապետ էֆէնտի Գարագաշ, Թերզեան էֆէնտի իր մտերմագոյն բարեկամներն եղած են միշտ այս միջոցին:

Սակայն Օտեան՝ հակառակ իր բարեկամներուն, հակառակ իր բաղմազան ըզբաղումներուն և ճամբորդութիւններուն, միշտ տխուր, միշտ վշտակիր եղած է: Եթէ մինչև 1870 իր տառապանքը տարտամ անորոշ բան մըն էր, աւելի բնական տըրամադրութենէ մը առաջ եկած, հիմա ա՛լ իրողութեան մը վրայ յենած էր: Տարիները չկրցան սպիացնել իր կոյս հոգիին մէջ այն վէր. «որ անյագ մնացած սէրն էր բացեր: Վիսպատ ըրած ուղեւորութենէն չորս տարի ետքը, գիշեր մը գրած է հետեւեալը.

«Թեթեւ ոտիւք անցնիմ զըռնէդ, ո՛վ գերեզման. տաժանելի եղաւ լոյսն ինծի համար. ըլլա՛յ խաւարն աչքերուս դիւր.

«Հառաջ մ'հանէ, սըրտի՛կս, հուսկ հառաջ, և ի նմա ազաղակին բոլոր աղէտք իմ կենաց:

* * *

«Մըմընջեսցէ՛ անունն իմ, մըմընջես-

ցէ՛ ի սըրտին, իբրեւ վանդիւն մի յետին զոր կրկնէ հովիտն առ հովիտ՝ ձայնի միոյ դադարելոյ...:

«Ձը տազնապէ՛ յիշատակն իմ ըզնա. անմըրիկ և անմըուր՝ որպէս իր լուիկ սէրն ալ ինծի համար:

* * *

«Առաւօտուն ըլլա՛յ ցօղիկն որ զողզը՝ զալով փայլի վարդից՝ նոր բացուած կօկոններուն վրայ, կամ տարտամ չողերը լուսինն ի վերայ ջուրցն անապակ՝ թափանց ընդ ամպս՝ պատկառոտս առաջի քնքուշ գեղոյ և սիրահրաւէր լուսնեան՝ մեծահանդէսն այն բնութեան...:

«Եւ կորիցէ՛ յիշատակն իմ վասն աշխարհի. և վասն քո՛ կորիցէ...:

«Եւ յետ չորից ամաց՝ և անապակ տեսնանն այն անձրպետ կանգնելոյ ընդ մէջ՝ քո և իմ, ի հառաջանս իմ բոցակէզ խառնի տակաւին անուն քո...:

* * *

«Միանգամ և եթ, ո՛վ դու բնութիւն, լերինք ծիծաղկոտ, զուարթ զալարիք, լուսակայլակ աղբերք ջուրց, մանրահոլով ալեակներով առուակ խաղալով ընդ արեւին, ծիծաղեցա՛ք դուք ինծի, ժպիտս ածելով... ժպիտն այն՝ փայլակ շանթին որ եհար դիս,

«Եւ ալիք հոսանուտ երջանկութեան իմոյ աւուրն այն մէնօրիկ՝ առեալ տարին ըզբեկորս իմ կենաց. երթեւեկեն ընդ շաւիղս խրթմընիս, և իբրեւ խօսքեւոյթ մի պշուցեալ ի ծոցոյ ալեացն, մերթ գնայ և մերթ դառնա՛յ, անշնջելի՛ն յիշատակ...:

* * *

«Քանի՛ցս արգեօք յառեալ ի քեզ, ո՛վ իմ լուսին, եղբերեգեալ ի սիրտ, համը ի բերան, յիշեցի զանցեալ օրերս ու վանցեալն իմ սէր.

«Քանի՛ցս արգեօք, ո՛վ երկինք, պաղատագին նայուածքներով առ քեզ ակնարկեցի...:

* * *

«Ո՛վ լոյս, պլպլելալով աշտարակիդ

մրայ(1), ամենի կոհակացն ու երկնից ու երկրի սեւութեանը մէջ, պլպլալալալ մահ ի սրբախ ուր այնքան անգուցեք սրտոտան և ուր խաւարն ու փոթորիկը ոչինչ նը-
ւաղ են քան ի վերայ Սեւ ծովուն, աներ-
կեւա՛նդ անդեղեւուն լոյս, ի քե՛ղ յար-
եալ մատչի հողիս, որ չըկամի՛ մխթա-
րութիւն, քան ի լուսնին շողեր և քան ի
կայծ բուրից երկնից, զի ոչ ամպրոպք աղ-
ղեն քեզ՝ ոչ փութք և ոչ կոհակք լեռնա-
կուտակ, և զի, լոյս անդգա՛յ, ոչինչ աղ-
ղի ի քէն առ իս, խորհուրդք մեղամաղ-
ձիկ և յոյս թրթռուն, և միայն՝ սին
պատկեր անէակ...»

* * *

1878ին երբ Եւրոպա ուղեւորեցաւ Օտ-
եան, հօքրիկս՝ Եւփիմէ Օտեան՝ և ես մի-
ասին էինք։ Օգոստոսին մէջ մեկնեցանք
Պոլսէն Մարտիրոսի ճամբով և 79 ապրի-
լին վերադարձանք, Բարիդ, Վիշի, Նիս ու
Հռոմ այցելելէ ետքը։ Այն ատեն տաք
տարեկան մանուկ մըն էի և շատ կը սի-
ւէի հօբարս որուն տունը կը կենայի
միշտ, երբ սրուց մեկնիլ, ինծի հետ տա-
նելու միտք չունէր և մինչեւ ետքի օրերը
գաղտուկ պահած էին ինձմէ իր երթալը,
բայց երբ վերջապէս իմացայ՝ անանկ գո-
ռում գոչում մը բրցուցի տանը մէջ որ
անմիջապէս ուղեւորութեան անտուկս
պատրաստեցին։ Ստեփան Փափազեան, որ
հոն կը գտնուէր նոյն վայրկեանին, ի
զո՛ւր վատնեց իր բոլոր պերճախօսութիւ-
նը զիս հանգարտեցնելու և համոզելու
համար։ Հօբարս, ետքէն, գոհ մնաց իմ
այս ընթացքիս՝ որով իրմէ չէի ուզած
բաժնուիլ։ Բայց բաժանումներ կան որոնց
առջեւ գոռում գոչում օգուտ չունին։

Այս ճամբորդութեան յիշատակը՝ թէ
եւ քիչ մը տարտամ, բայց հաճելի
պատկերներով լեցուն է ինծի համար,
միայն երբեմն պզտիկ ցաւեր ու մանկա-
կան վիշտեր պատճառած է ինծի հօբարս
որոնց առիթը սակայն ես տուած եմ։
Ծուրթիւնս ու քիչ մըն ալ բթամտու-

թիւնս ատեն ատեն կը սրտմտեցնէին
զինքը։ Հօքրիկս օրը հինգ ֆրանսերէն
բառ գոց ընել կուտար ինծի, որոնք ի-
րկուսնը կը կրկնէի հօբարս։ Շատ ան-
գամ չէի կրնար սորվիլ. ընդհանրապէս
հինգ բառերուն մեծ մասը գոց կ'ընէի,
միայն մէկ երկու հատը կը մոռնայի, և
ահա՛ կը բարկանար, կը պօռար, կըյան-
դիմանէր և երբեմն ալ կերակուրէ կը զըր-
կէր, գոնէ քանի մը ժամ։ Բարեբախտա-
բար այս տեսակ պատիժներ չե՞նային
կամ կրկէսը այցելութեամբ մը կը վերջա-
նային։ Գորովալի վայրկեաններուն մէջ
զգուանքի կերպ մը ունէր որ շատ սուղի
կը նստէր ինծի. մազերս, որոնք գան-
գուր էին, կը բռնէր և ուժով ուժով
կը քաշէր, այնչա՛փ ուժով որ աչքէս ար-
ցունք կուգար։ Նիս գտնուած ատեննիս
միասին մեր լուսանկարները հանել տուած
ենք. իմ լուսանկարներէս մէկուն ետեւ
գրած է հետեւեալը.

Յո՞ սըլանան այդպէս յանդուգն ո՞վ մանուկ
հերքը ոսկեթել
ձակատող ի թիւ, այլ երեսօրք են տարած-
վեր թուխ ամպեր.
Անտիական հասակիդ մէջ նըշմարեցի՞ր զու-
արդէն
Խանդն որ յերկնից իջանէ եւ զի խնդրես
հուր փայլակէն.
Եւ մոխրամածն այն տըխրութիւն, չըւառ
մարդուն լոկ բաժին,
Ձալիս սըրտիդ յուզեց՝ վաղ քան վիշտեան որ
բեզ ալ հասնին.
Ա՛հ, հօբարիդ վերջին ժպիտ, մի՛ գու որդ-
եակ մի՛ այդպէս.
Վարդն ու գոհար լոյսն ու ժպիտ քու երե-
սէդ վտարես...

* * *

Պատկառելի կերպարանք մը ունէր
Օտեան որ մեծարանք կ'ազդէր ամենուն։
Մոնաքոյի խաղարանին սրահը տղայ մըտ-
ցընել խսաիւ արգիլուած է, սակայն երբ
իրեն հետ կ'երթայի ու ժամերով քովն ի
վեր կը կենայի, ո՛չ ոք կը համարձակէր
զիտողութիւն ընելու։

Օր մը, ընթրիքի ատեն, սեղանակից
ունեցաւ ֆրանսացի մը, որուն հետ եր-
կարօրէն խօսակցեցաւ այլ և այլ խնդիր-
ներու վրայ։ Ֆրանսացին, յափշտակուե-

[1] Առ փարոսն Ֆէնէր-Պաղէյի, յիշատա-
կաւ փարոսին որ ի Վառնա։

ցաւ իր խօսակցէն. իր անունը յայտնեց, կոմսի երկայն անուն մը, տիտղոսներով ծանրաբեռնուած, և յետոյ հօբարթա անունը հարցուց:

—Օտեան:

—Օտեան, ա՞յդչափ միայն:

—Այո՛, պարոն, այս բաւական է:

* * *

Պոլիս վերադառնալէն տարի մը ետքը, 1880 ապրիլին, կրկին մեկնեցաւ Ռուսիոյ միասին երթալ:

—Ձէ, Երուանդ, ու՞րք օրէն պիտի գամ, ըսաւ:

* * *

Եօթը տարի ապրեցաւ Օտեան Եւրոպայի մէջ, ընդհանրապէս Բաքիդ, ուր կեանքին մեծ մասն անցուցած է կեդրոնէն հեռու, Օթէօյլի մէջ: Հրանտ Ասատուր Օտեանի յիշատակին նուիրուած զգացումով լեցուն յօդուածի մը մէջ ներկարագրած է այն բնակարանն ուր նա ապրեցաւ ու մեռաւ:

«Միրուն Էլէւ մ'էր: Պարտէզին դրան վրայ, ոյր երկու կողմերը կային երկաթէ վանդակներով որմեր, խոշոր տառերով գրուած էր. Villa Sainte Marie. այդպէս մկրտեալ էին չէնքը: Պարտէզն ընդարձակ չէր, ոչ ալ լաւ խնամեալ. մէջտեղը դաւարագեղ ծաղկոց մը և չորջն ալ նուրբ ինձուղի մը: Պատերուն մօտերը թուփեր ու փօքր ծառեր. մի քանի նստարաններ աստ անդ, նստարաններէն միոյն առջեւ ալ գեղջկական սեղան մը, ուր երբեմն կ'աշխատի եղեր:

«Սէնդ Մառիի Էլէւին մէջ Օտեան ունէր ննջատեանակ մը միայն և քոյն ալ խուց մը, յարգարանքի յատկացեալ: Մտերիմ հիւրերը կ'ընդունէր ննջատեանակն, այլ Էլէւի ընդունելութեան համատ սըրահն ալ ի հարկին իւր տրամադրութեան ներքեւ էր:

«Այդ տան մէջ Օտեան ճանչցած էր ամերիկացի աղջիկ մը, որ հոն իր մօրն հետ անցուց քանի մ'ամիսներ: Ինչպէս հայր մ'իր զաւկին, Օտեան ալ յարած էր այդ աղջկան: Տեսած եմ այդ ամերիկու-

հին օր մը Օթէօյլ, Օտեանի տան պարտէզին մէջ: Երկայն դեղեցիկ հասակը, քայլուածքն համեստ ու վեհաշնորհ, նուրբ իրանը զոր կը սեղմէր պախճաւանդն և զլուխն ալ խարտիչագեղ ու վեհապանծ, զոր բարձր էր բռնած, կուտային իրեն վէս աղնուութիւն մը: Տակաւին աչացս առջեւն ունիմ իւր անոյշ դէմքը, տըրտում ու տժգոյն:

Այդ աղջիկը զոր կ'ուրուագրէ Հրանտ Ասատուր՝ Մայրա կը կոչուէր: Մայրա ծաղկահասակ աղջիկ մըն էր որ իր դերն ունեցած էր Օտեանի կեանքի վերջին տարիներուն մէջ. փափուկ, անմեղունակ, սփոփիչ դեր մը: Չորս ամիս հաղիւ տեսնուած են իրարու հետ, բայց այս բաւական եղած է սերտ մտերմութիւն մը հաստատելու համար իրենց մէջ: Իր նամակները Մայրային գրած ու անկէ ստացած պատասխանները, Մայրայի պատկերները, անոր բնակած քաղքին, նստած տանը, պըտտած վայրերուն լուսանկարները, զորս երկխոսութեամբ, քիչ մըն ալ գաղտուկ, պահած է Օտեան, ցոյց կուտան թէ ինչ խորին համակրութիւն մը ազդած է իրեն այդ Ամերիկացի աղջիկը:

Գրութեան մը մէջ, որ կարծեմ Աբբա Գառնաթիւնի թարգմանութեան յառաջաբանին մէկ մասը կազմելու տահմանուած ու ապա մէկ կողմ ձգուած է, Օտեան կը խօսի ամերիկացի աղջկան մը վրայ որ անշուշտ Մայրան է:

«Նա ատենով ճամբողութեանցս մէկուն մէջ, ամերիկացի աղջիկ մը ճանչցայ. անով կ'ուղեմ վերջացնել նամակս: Պէթինային չափ հարուստ չէր, քառածի չէր վարեր ու չէր աշտանակեր. բայց ուրիշ ամեն կերպով Պէթինային կը նմանէր: Իր մօրը հետ հիւր եղած էր ընտանիքի մը ուր կ'երթայի ես ալ երբեմն: Առաջին անգամ այս աղջկան բերնէն լսեցի թէ ծնած օրէն մինչեւ այն օրը միշտ երջանիկ եղած էր. քսան տարեկան էր. զարմանալին այն եղաւ ինծի համար՝ որ իր մայրն ալ, որ վախճուն տարին անցած էր, նա ալ մի և նոյն բանը վկայեց իր անձին համար. «Երջանկութեան տարիներու փոխարէն, ըսաւ, տհաճութեան,

տագնապի, մոմտուքի հաղիւ թէ մէկ քանի ժամեր ունեցած եմ»։ Աղջիկը միայն վիշտ մ'ունէր.

«Մէկ հատիկ վիշտս այս եղած է բոլոր կեանքիս մէջ» կ'ըսէր . մարդ մը՝ որ Գերմանիոյ մէջ հանդպեր էր և որ գիտէր թէ զժբախտ է։ Վասն զի յաճախ կը մըտածէր ադ մարդուն . եւրոպական գաղափարով ըսի իրեն որ մը.

«—Կը սիրէ՞ք զինքը, Օրիորդ։

«—Ուրեմն չէ՞ք կրնար երեւակայել դուք, ըսաւ, թէ երբ աղջիկ մը յարդ ու համարմունք կ'ունենայ մէկուն վրայ, առանց սիրահարելու, կրնայ համակրիլ անոր վիշտերուն։ Իր վիշտերը չեմ ալ գիտեր թէ ի՛նչ են. գիտեմ միայն, զգալով քան թէ լսելով, թէ գաղտնիքներ կան իր կեանքին մէջ։

«—Թերեւս ոճրագործ մըն է։

«—Թերեւս բարեգործ մըն է։ Մարդը զժբախտ ընելու համար երբեմն այս երկուքը մի և նոյն բանն են։ Երբ մարդ, թէ՛ չար գործելու համար ըլլայ թէ՛ բարի, հասարակաց պայմաններէն անդին անցնի, երբ յախուռն և անիմաստ փոփոխութիւնք իրաց որոնց դիպուած կ'ըսենք՝ յորդան տան կեանքի մը մէջ, որ իր առանցքէն դուրս ելած ըլլայ, ա՛լ այնպիսին եղելութիւններէն ընդ քնար ձգեալ, ընդ քար և ընդ ժայռ, միսերուն կտորներովը ծածկելով ուղին, կը թաւալէ մնացեալ օրերն իր կեանքին իբր հանելուկ կամ ծաղու նիւթ հանգիստանալով։ Ո՞վ գիտէ թէ այսպիսի կեանք մը չէ ունեցած. նա ալ։ Այլ եթէ իր անցեալը չը կրցի թափանցել, ու հաւատտեալ գիտեմ թէ նա չը կրնար չար մտածել և չար զգալ որ և է մարդու համար։ Եթէ զինքը աւելի երկար ժամանակ տեսած ըլլայի, թերեւս հասկնայի. հասկցայ միայն թէ ա՛լ բան մը չսպասէր այս աշխարհի վրայ։ Մի և նոյն օթեւան կը բնակէինք ու մի և նոյն հասարակաց սեղանը կը ճաշէինք։ Նա չէր խօսեր, չէր նայեր։ Եթէ նայէր, յանկարծ կ'անուշնար այն սոսկումն որ կ'ազդէին ինձ իր թխպահոծ դէմքն ու ճակտին վրայ փորուած կնճիռները։ Օր մը խօսեցայ։ Այն օրէն ետքը՝ որչափ ա-

տեն որ մնացի այն օթեւանը՝ մէկ երկու ժամ կը խօսակցէինք ամեն օր։ Հոգեւոր նիւթերու վրայ կը սիրէր խօսիլ, ես ալ կը սիրեմ։ Հաւատքով ու խանգով կը խօսէր։ Անկէ ի վեր կը թղթակցինք, բարեկամ ենք իրարու։ Իմ վերջին բարեկամս, կը կոչէ զիս և այս մեծ ինչէ իր կողմէն, զի իր բարեկամները շատ կը սիրէ։ Կեանքիս էն մեծ ուրախութիւններէն մէկը պիտի ըլլայ որ լսեմ օր մը՝ թէ սկսեր է ժպտիլ կենաց։

«Մէկ քանի օր ետքը նորէն տեսայ ամերիկացի՝ աղջիկը։ Նամակ էր առեր, կուլար, ապա սենեակն ելաւ աղօթելու համար։

«Սեղճ մարդը. անտարակոյս ուրիշներ ալ եղան որ լացին իր վրայ, իր սիրելիները. այլ թերեւս միայն այս ամերիկացի աղջիկն եղաւ որ աղօթեց իրեն համար։»

Եւ արդ պրպտենք քիչ մը Օտեանի և Մայրաի միջեւ եղած թղթակցութիւնը.

ԵՐՈՒԱՆԻ ՕՏԵԱՆ

ԽԹՄԱՆ ԳԻՇԵՐԸ

ԺԱՂՈՎԱՐՄԱՆ ԲԱՆԱՍՏԵՂԹՈՒԹԻՒՆ

Խօսքը մէջերնիս, ալ չ'ունիմ շապիկ, Ոտքերս որ ըսեմ շատոնց են բոպիկ. Ա՛խը կը քաշեմ չոր հացի մըզլոտ, Վայ է ինձի պէս մարդուն չուլչըլոտ։

Ո՞ւր մընաց, ո՞ւր է աս տարի դարուն, Փոշին ու քրտինք ամառ օրերուն. Հատաւ փատ ածուխ, կը տիրէ ձրմեռ, Ինկեր եմ փողոց կէս մերկ կիսամեռ։

Ո՛ւֆ, ո՛ւֆ. ի՛նչ ցուրտ է, սառեր է գետին, Ձրմեռ կայ ձրմեռ դեռ ասոր ետին. Հա՛, գէշ կատակ չէ՛, ծերուկ Ս. Թափոք, Թօթուէ մօրուքըդ ձուն թափէ լոփ լոփ։

էն հոգի օրն է օրը աղքատին,
Երեսէկ անոր որ մարդ չունի ետին.
Վախ որ իմ ետիս ունիմ մէկ բունիկ,
Ձեռքս կը նային զաւկընէր կընիկ:

Ի՞նչ ընեմ, հոգը՛ս, անանկ ալ անանկ,
Աղքատ եմ ծընէր կը մեռնիմ տընանկ.
Անօթի փորանց երբ մարդ կը ճողի,
Ստակէ չեւար, պէտք չունի ճաղի:

Հա՛, գէշ կատակ չէ, ծերուկ Սբ. Յակոբ,
Թօթուէ մօրուքըդ ձուն թափէ լոյի լո՛ւփ.
Ան ո՞վ է կ'անցնի, հոս եկու, բըստ բըստ,
Սա ձեռքէս բռնէ, հա՛, ցատկէնք վըզա վըզա՛:

Վա՛յ, մարդ չէ եղբ, հոյն է կը փչէ,
Շուն մըն է կ'անցնի, ետիս կը հաչէ.
Հաչեցէք նայինք շունէր վայրահաչ,
Ես լացըս լացի ձենէ շատ առաջ:

Թաղն է ձեփճերմակ, կը թափթըփի ձուն,
Մութը կը կոխէ, չի մընար ձան ձուն.
Մինակ թէ հեռուն շունէրը կ'ոռնան,
Զիրար խածնելով ցուրտը կը մոռնան:

Ան ո՞վ է կ'անցնի, հոս եկու բըստ բըստ,
Սա ձեռքէս բռնէ, հա՛ ցատկէնք վըզա վըզա,
Թշուառ սրտիկս կը նետէ թը՛փ թը՛փ
Նայինք կը տաքնա՞նք, զը՛ ցատկէնք զըբզըբ:

Դեռ առտու չեղած կը մեռնիմ շատ շատ,
Թշուառ մարդոցմէ կը պակսի մէկ հատ.
Ո՞վ Ծընունդ չընէր, պէտք չունի Ձատկի,
Անօթի շունը՝ ցուրտէն կը՝ ստակի:

Ձեմ գիտեր ինչո՞ւ սրտիս չի գար վախ,
Ցուրտը խելքս առաւ, դիս դարձուց ճիւղ.
Ծընայ որ ապրիմ՝ բան մը հոգըս չէ,
Շունը չի ստակիր երբ որ կը հաչէ:

Թշուառ սրտիկըս կը նետէ թը՛փ, թը՛փ,
Նայինք կը տաքնա՞նք, զը՛ ցատկէնք զըբզըբ.
Տանըս մօտեցայ, կը դողամ դը՛ռ դըռ,
Մեղքըս մի առնէք թէ կ'ընեմ տըռ տըռ:

Կընի՛կ, էրի՛կդ է, ելի՛ր, դուռը բաց,
Աս ի՞նչ է, իթման սեղա՞ն ես դրած.
Ձըկայ քու զոյգդ, ո՞չ նըման քեզի,
Հըսողին երկու աւկանջը խօսի:

Սուտ է որ կ'ըսեն ապրողին ապրանք,
Մեռնողին պէտք է կանգուն մը պատանք.
Ա՛խ, մեզի պէտք է — ըսել չի խպնինք,
Ապրողին՝ կին մը, մեռնողին՝ երկինք:

Սիրով տաքցեր եմ, չեմ դողար դը՛ռ դըռ,
Ալ դո՛հ եմ բաղդէս, ի՞նչ ընեմ տըռ տըռ.
Կի՛ն, դուռը գոցէ, թող սառի գետին,
Ձըմեռը թողունք մեր դրան կտին:

ՄԻՀՐԱՆ ՅՈՎՀԱՆՆԻՍԵԱՆ

Ս Ա Ռ Ա

Ն Ո Ր Ա Վ Է Պ

Ա.

Ա՞յր ու կին, թէ քոյր և եղբայր. չեմ
գիտեր:

Երկուքն ալ մեղրամոմի դունաառու-
թիւնը ունին որուն վրայ չէկ ու գուռզ
մաղերնին ոսկիի ցոլքեր կը թողու. մի և
նոյն դիմագիծը, երեսի մի և նոյն ձուռ-
ձեւը, երկուքին վրայ ալ նուրբ ու քըն-
քոյշ բան մը:

Շոգենաւին մէջ ուր իմ մօտիկս նստած
են, երիտասարդը վեր դարձուցած է բաւ-
թոյին մուշտակաւոր օձիքը ու հորը ին-
կած աչքերէն՝ նայուածքը աննպատակ կը
թափառի պատուհանէն դուրս, ծովին
վրայ: Զխօսիր ու զլիսու շարժումներով
միայն կը պատասխանէ իր ընկերուհւոյն,
առանց գիտելէ դադրելու ծովը որ իր բո-
լոր ուշադրութիւնը գրաւած կը թուի:

Անիկայ, ընդհակառակը, առողջու-
թեան խրոխտ արտայայտութիւն մը ունի.
մեղրագոյն բուրդէ չըջագետտ մը հաղած
է, իր բնական գոյնին հետ՝ միօրինակու-
թիւն մը կազմելու համար կարծես: Նի-
հար ու բարձրահասակ կին մըն է, բարակ
մէջքով ու տարօրինակ կերպով ուռուցիկ
լանջքով մը որուն դուրս ցցուած երկու

տուր անկիւնները՝ իրենց հիմերուն վրայ թաւալած զոյգ մը վրաններու տպաւորութիւնը կը թողուն:

Ամբարտաւան նստուածք մը ունի որ կը վայէ իրեն, ոտքը ոտքին վրայ, երկի մարդու մը պէս. պահ մը կը յոգնի ու ոտքին գիւրքը կը փոխէ ու մետաքսի շըրշիւն մը կուգայ պատմութեան տակէն ներգաշնակ ու փայփայող նուագի մը պէս, բեհեգէ հանգերձեղէններուն ձայնը:

Այսպէս նստած, զիրք մը կարգաւորուած է ինքզինքը. էջերը կը դարձնէ հեռակէտէ տեսողութեամբ մը, երբեմն ընթերցումը կ'ընդհատէ, հիւանդին բառ մը ըսելու, պարբերութիւն մը ցուցնելու համար. ժպտելով, ծիծաղելով իր մունջ բարեկամը խնդացնելու ու անոր մուշկամած ճակատը պատող տրամութիւնը փարատելու յայտնի ջանքով մը:

Այս խնամոտ հոգածութիւնը այդ վէս ու խիղիւս կնոջ քով հսկայ ծառի մը վըրայ բացուած փափուկ ծաղիկի մը ներդործութիւնը կը թողու ինծի: Կ'զմայլիմ վրանին ու նորէն կը հարցնեմ ինքնիրենս.

—Այո ու կին, թէ քոյր և եղբայր:

Բ

Բրինժիբոյի մէջ ճանչցայ զիրենք. մեծահարուստ հրեայ ընտանիքէ մըն էին: Էրիկը իր հօրեղբորդին էր ու անոր հիւանդագին վիճակը գիտնալով՝ Սառա ամուսնացեր էր հետը. երբէք արգելք մը չէր նկատած զայն իրենց ամուսնութեան. ինչ փոյթ, կրնային մեռնիլ. օր մը չէ նէ օր մը պիտի դատուէին աշխարհէս. կ'արժէր հաշուի դնել ասիկայ. սպանեօլի տաք արիւնը կը խաղար իր երակներուն մէջ. ու սիրոյ մէջ ալ նորէն հրեայ շահագէտի յանգուգն խնամատարութիւնն էր որ ժառանգութեամբ փոխանցուեր ու մտեր էր այս գեղեցիկ կնոջ հոգւոյն մէջ:

Կարգուեր ու երջանիկ եղեր էին. բայց երթալով ալ աւելի սաստկացեր էր այն մաշող հիւանդութիւնը որ իր երիտասարդ ամուսինը կը հասցնէր:

—Խնայէ՛ երկանդ, ըսեր էին իրեն:

Իր ախտաւարակ խառնուածքը չկըցաւ երբէք հանգուրժել այս պատուէրին. ար-

տաքին ցուրտ ու անտարբեր երեւոյթին հակառակն էր ներսը ու երկու տարուան մէջ զիրենք այրող հուրը ճշմարիտ աւերումներ գործեր էր երկանը վիճակին վըրայ. օգափոխութենէ՛ եթէ ոչ բժշկութիւն՝ գէթ բարւոքում մը կ'ակնկալէին: Ու հիւանդապահի մը պէս կ'ընկերանար ահա իր ամուսնոյն, ամբողջ խնամքի, գուրգուրանքի մթնոլորտի մը մէջ պահելով զայն, ճիշդ ինչպէս կանխահա ծընունդով աշխարհ եկող երախաները՝ արհեստական գաղջ մթնոլորտի մը մէջ կը մեծցնեն:

Բայց փոքրիկ բարեկաւութիւն մը ամեն խոհեմութիւն մոռցնել կուտար իրենց ու նորէն անուղղայ շուայլի մը վարժութեամբ կը վատնէին այս չնչին դրամազուլքը: Յետոյ, զոյնմը կուգար և հիւանդը վերըստին կազգուրեւու անդուաշխատութիւնը:

Աղէկ բարեկամ եղանք ամուսնոյն հետ ու շատ հեղ կ'երթայի իրենց տունը զոր Բլադանայի կողմը ընտրած էին, հիւսիսէն փախչելով: Պատուհանին քով իր լայն թիկնաթոռին մէջ ընկողմանած հիւանդին աչքը դուրսն էր. ինչ կը խորհէր արդեօք՝ կնոջը երեսը չնայելու տարտամ դիտաւորութիւն մը կը գուշակէի, դժգոհ էր անկէ. անոր վրդավիշ ներկայութեամբ՝ չէր նմաներ քիչ մը այն սնանկ խաղամուկին որ ձեռքը գրպանը կը դեգերի հիմայ, ուրիշներուն ձգելով սեղանը որուն տեսնով բաղդաւոր գահերէցն էր:

Այո՛, ուրիշներուն պիտի թողուր այս կինը, իր սպառիչ հրապոյրներով որ հիմայ տարտամ կերպով մը կը յիշեցնէր ինծի այն հոյակապ ապարանքներէն մին որուն տէրը մեկնելու հարկադրուած՝ կանխահոգ հեռատեսութեամբ ինքը մէջը եղած ատենէն պիտակ մը կը փակցնէ վրան սա բաւերով

ԾԱՆՈԹ ՏՈՒՆ

Գ

Իր բազմաթիւ սիրողներուն մէջ ամենէն վեհերօտը ես էի. համարձակները կային, ձեռներէցները, քծնողները, պահանջողները, ամբողջ հաւաքածոյ մը,

տեսակ մը սիրահարներու թանգարան . ինծի՝ վերջապահին մէջ անհաշիւ անկիւն մը միայն տրուած էր . ոչ մէկուն համար հաշուի առնուելիք մրցակից մըն էի . ու չինչ ունէի Սառայի պէս արտակարգ կընող մը առջեւ շնորհ գտնելու համար . իմ՝ աշխարհի սրբողած իմաստասէրի խոկումներս անշուշտ իր ջիղերուն կը գպչէին ու անկապ խօսքերս սրտնք ցիր ու ցան մտածումներուս ցոլքերն էին, չահեկան բան մը չէին կրնար ըլլալ իրեն համար :

Անպիսի իր շուրջը մարդիկ կային որ նրբամտութեան հեղեղներ կը թափէին . հանճարեղ բառերով, անակնկալ պատճառաբանութիւններով . կ'ընդառնէին իր անտարբեր գիցսհիշի գէմքը : Ամենուն կ'ըսէր միշտ .

— Էրեկս հիւանդ է ու սիրտ չունիմ :

Ասով իմ սրտիս ա'լ աւելի կը մօտենար վրան զի ես ալ կը սիրէի այս հիւանդը . բանաստեղծի ու արուեստագէտի խառնուրդ մը կար այս մարդուն վրայ և աղնուական բան մը որ համարում ու պատկառանք կ'ազդէր ինծի : Եւ տեսնելով երկտասարդ կիներ՝ հաւատարիմ իր սիրոյն ու անձնութեանը մէջ, իմ սէրս ալ պարզապէս հիացումի կը փոխուէր ու անմուռն կը պաշտէի զինքը անմատչելի ու աննիւթ արարածի մը պէս : Գոհ էի երես չի տալուն համար զինքը չընկալատող մարդոց որոնք անկարեկից կը մտնէին այս տունը, իրենց փողկապին հանգոյցը, շապիկին անբիծ սպիտակութիւնը միայն բերելով :

Սառա առաքինի կին մըն էր, աշխարհային երանութենէն իր արդար բաժինը առած ու վայելած՝ կին մը՝ որ իր իրաւունքէն աւելին չուզէր և զիտէ իր սրտին ու իր մարմնին իշխել :

Այսպէսով իր բարոյական նկարագիրը մեծնալուն հետ՝ իմ պաշտումս ալ կ'աւելնար իր անձին համար . իր քաղաւածքը կը ճանչնայի ոտնաձայնէն, իր թաշկինակը կը զանազանէի ծաւալած հոտէն . իր փոքրիկ սովորութիւնները, քմահաճոյքները գոց գիտէի վաղեմի բարեկամի մը պէս :

Ու արդահատանքս հիւանդէն աւելի առողջին կ'երթար . մեղքցուելիքը այս

մանկամարդ կիներն էր որ իր անսպառ գործի գանձերը անտես թաղելու ու իր երկտասարդի իշխելը ու գողերը մարելու արիութիւնը ցոյց կուտար :

Դ

Հիւանդին վեճակը հետզհետէ կը ծանրանար ու Սառայի անձնութեանը նոյնքան աւելի մեծ կ'երեւար աչքիս : Հիմայ դուրս չէր ելլեր երկանը սենեակէն, երբեմն ես ալ կը գտնուէի հոն . բերանը բերնին կը կենար մինչեւ վերջը . հիւանդին շնառութիւնը խառնելով իրենին : Այս չափազանց զոհողութիւնը ճամբիտ խեղագարութեան մը յանգելու վրայ է . երկանը հետ մեռնիլ կ'ուզէ անշուշտ, անգին ալ անոր հետ ըլլալ, ինչպէս հոս եղած էր, և իր անհատնում վայելքները անոր պահել միայն : Այո՛, այս է իր գաղափարը :

Մնաց բարոյի ատեն մինչեւ սանդուխին մօտ կ'ընկերանայ ինծի . ու առիթը բարեպատեհ կը նկատեմ բառ մը ըսել, զգուշացնելու համար զինքը :

— Վա'խկոտ, պատասխանեց ինծի, ձեռքերս թոթվելով վա'խկոտ, այդպէս երկտասարդ ես դուն :

Ամօթէս ու վայրոյթէս գեղնեցայ :

— Քու անձիդ համար վրայն վախկոտ եմ, ըսի իրեն . տեսար որ ես այն հիւրերէն չեմ որ հիւանդէն կը վախճին չի պըլլչկուելու համար . ես ամեն վայրկեան ամուսնոյդ մօտը գտնուած եմ : Եթէ դուն չես վախճիր իրմէ, այդ քու պարտքդ է արդէն, դուն անոր կիներն ես, ես... :

— Այդ կնոջը սիրողը, միմիջեց ականջս ի վար :

Ձեռքս չթողուց ու ես ծուկեայ համբուրելու համար զիս բռնող մատները :

— Ո՛չ, ըսաւ հեռանալով չըլլար :

Յետոյ, տեսնելով ցաւած գէմքս, մեղքըցաւ անշուշտ ու մատովը՝ խորհրդաւոր նշան մ'ընելով աւելցուց .

— Վերջը :

Ե՞րբ :

Իրիկուան սրտատրոփ նորէն եկայ . վերջը—ըսաւ ինծի : Ամեն նիւթի վրայ խօսեցանք . անիմաստ խօսքեր միայն ըսի

կարծեմ. խեղքս վրաս ըլլալու չէր. մեկնելու ժամուն կ'սպասէի ակնդէտ. դուրս ելայ:

—Վերջը, վերջը, ըսաւ նորէն Սառա ու ճանբու գրաւ զիս:

Միշտ այսպէս կ'ըսէր ինծի ու այսանգուլ յետաձգումը՝ մերժումի քաղաքավար ձեւ մը միայն նկատած էի:

Ամբողջ ամառը անցաւ ասանկ, ու ես ալ չէի յիշեցներ իրեն խօստումը, բայց ան չէր մոռնար ու ամեն առթիւ մի և նոյն բառը կուգար իր շրթանցը վրայ.

—Վերջը:

Ե՞րբ ուրեմն:

Ե

Վերջին վայրկեանները՝ անոյշ մրափի մը սկիզբին նմանեցան հիւանդին համար. զարմանալի երեւոյթով մը՝ գէմքին գիծերը շտկուեցան: Հիմայ դուլը բարձին գրած ու աչքերը կիսափակ սա անկողնին մէջ՝ ճիշդ միևնոյն մարդն էր որուն չորս ամիս առաջ շոգեհաւին մէջ հանդիպած էի: Իր ոսկիի կարմրութեամբ ցոլացող մազն ու մօրուքը՝ պատուհանէն եկող առաւօտեան ճառագայթներուն տակ կը խայտան կարծես ու անգոյ կեանքի մը պատրանքը դեռ կուտան գէմքին: Մեռաւ. և ես գըլխիկոր ու ապշած՝ առջի հեղ կը տեսնեմ մահը հոս աչքիս առջեւ, հանգարտ, չըքեղ, գրեթէ հրապուրիչ: Սառանի պէս պարզուող ծովի երեսն է ան. մաքուր ու միօրինակ հանգարտութեամբ մը ծածկելով պարագութիւնը:

Սարսափը չի բռներ զիս. արհաւիրք չեմ զգար այս հրեայ երիտասարդին զիական թով, այլ զարմանքով կը լեցուիմ. ի՞նչ է այս պառկող մարդը: Հարցում մըն է թէ Պատատիան մը: Յետոյ, անգղալարար աչքերս կը լեցուին. Սառա քովս է բայց չի լար. կը կարծեմ որ իր վշտին մեծութիւնը կ'արդիւնէ զինքը արտասուելէ, այն շատ լեցուած ամաններուն պէս, որոնք չըլլելով չեն թափիր:

Սեւեր հագած է որոնք իր մեղրամոմի գէմքին անփայլ ձերմկութիւնը կը ցոլացնեն. քովս կուգայ ու իր բուրմամբսէտ թաշկինակովը աչքերս կը սրէ:

Այս վայրկեանիս, այս մահուան սենեակին մէջ բոլորովին մոռցած եմ զինքը, բայց ան՝ իր ներկայութիւնը յիշեցնել կուտայ ինծի. ձեռքս կը բռնէ նորէն, ճիշդ ինչպէս ամիսներ առաջ կեցուցած էր զիս մեկնելու ժամուս: Կը տեսնեմ որ աչքերը անսովոր փայլով մը կը ցոլան, մութի մէջ՝ կատուի աչքերու վառելուն պէս, դեղնորակ լոյսով մը:

Իր քովը կը նստեցնէ զիս բռնի, ու ակնարկութիւն մը ընդելով, իմ առջի թախանձքներուս,

—Հի՛մայ, կ'ըսէ յանկարծ:

Եւ այս սենեակին մէջ կը բացատրէ ինծի, իրաւագէտի մը պէս փաստերով զինուած, իր կեանքի ըմբռնումը ու իր պարտաւորութեան գաղափարը:

Էրկանը հաւատարիմ եղած էր ցորչափ կենդանի էր անիկայ. մազի չափ չէր թերացած իր անձնութեան ու իր պարտքին մէջ: Ի՞նչ պէտք թերանալու. չէ՞ր կրնար համբերել. անոր կեանքը՝ իւրը հատած պատրոյգի մը պէս վայրկեանէ վայրկեան շիջելու վրայ էր. կրնա՞ր այնքան անսիրտ ըլլալ որ անոր մարմնուն չսպասելու չափ անհամբերութիւն ցոյց տար. ո՛չ. անոր համար Գե՛ղը ըսած էր միշտ:

Ու ահա ասանկ իր բարոյականի ու սիրոյ պարտականութիւնները կը մեկնէր թուաբանական հաշիւ մը լուծելու պէս:

Տրամաբանութիւն կար իր խօսքերուն մէջ, բայց սիրտ չկար ու չեմ գիտեր ի՞նչ ու պարզապէս ահարկու ու ռամիկ թըլեցաւ ինծի այս ըմբռնումը՝ որ ապաքէն բոլոր աշխարհի մարդոց սովորական ըմբռնումն է:

Լաւագոյն սեպեցի անոնք որ առանց հաշիւի կը թերանան քան թէ անոնք որ Սառանի պէս, հաշիւներու չորհիւ անթերի կը հանդիսանան մեր աչքին:

Քովիկինս երկնցող այս զիական մօտ՝ որ իր էն սիրած էակն էր, այս դաւանութիւնը վրդովեց ու սարսափեցուց զիս. խղճիս ձայնը արթնցաւ, անժամանակ խօսող աքաղաղի մը պէս ու մերժեցի զինքը:

ԳՐԻԳՈՐ ԶՈՀՐԱՊ

ԵՕԹՆՕՐԵԱԿ

Արովեանի յիշատակը. — Միւսէի արձանը. — Զեւագրի մը պատմութիւն. — Անտիպ ոտանաւոր մը Պէշիկմաշլեանէ. — Սառա Պէռնառի ուխտագնացութիւնը. — Դերասանական կեանքի դառնութիւններ. — Սխալեցայ:

Մոսկուայի հայերը ձեռնարկած են մահարձան մը կանգնել Սառա ոտանաւոր Արովեանի յիշատակին: Այս գեղեցիկ մտածումը, զոր ունեցած են Պ. Պ. Ա. Ծատուրեան և Մ. Պէրպէրեան, զիւրազործագրելու համար՝ տեսարակ մը պիտի հրատարակուի, Արովեանի պատկերովն ու կենսագրութիւնովը, և վաճառման արդիւնքը պիտի յատկացուի մահարձանի կառուցման ծախքին: Բնականաբար նուիրատուութիւններ ալ պիտի ըլլան Թիֆլիզէն:

Ճիշդ այն պահուն երբ այս լուրը կը բերէ կաւկասեան Սուրհանդակը, այստեղ կը հրատարակուի Ծառ հայ կենսագրութեանց գործին երկրորդ հատորը, որուն մէջ Այվազեան գետեղած է Արովեանի կենսագրութիւնը, չահեկան ծանօթութիւններով ու մանրագէպերով: Վենետիկէն ալ, Բաղճալէյ, այն բազմախառ ստումնասիրութեան մէջ որ նուիրուած է «հայ լեզուի ուսման յեւրոպա», քանի մը էջ կը նուիրէ այդ համակերելի անունին: Զուգադիպութիւնը ուշագրաւ է, և եթէ խօստացուած տեսարակը ըստ տեսնէ ի Թիֆլիզ, ժամանակակից մատենադրութեան մէջ ալ մահարձան մը կանգնուած պիտի ըլլայ «Բանաքեռցի»ին, թուղթի փառք մը՝ զոր կ'ընծայեն Պոլիս, Թիֆլիզ ու Վենետիկ, մտաւորական երեք մեծ կեդրոններ:

* * *

Արձան մըն ալ կը կանգնուի ի Բարիզ, բանաստեղծի մը՝ որուն քերթուածները, — օտար բանաստեղծութեանց մէջ, — ամենէն աւելի սիրուած ու կարգացուած են հայերէն, և ամենէն ալ քիչը թարգմանուած: Ասով հանդերձ Միւսէ չէ դադ-

րած սքանչացողներու խումբեր ունենալ մեր մէջ, ու պիտի ունենայ միշտ, իր գերազանցապէս դժայումն տալերովը: Բարիզեան քրոնիկագիր մը ճշմարիտ գիտ մը ըրեր է վերջերս, պատահելով պառակտ մը որ բանաստեղծին քով հակած էր մինչեւ մահուան ժամը: Այս կին 1850 էն 1857 վերակացուհի էր Միւսէի տան մէջ, և այդ թուականէն առաջ՝ երեք տարի ալ Միւսէի մօրը տունը, երբ բանաստեղծն ու եղբայրը իրենց մօր հետ կը բնակէին: Օր. Քօլէն, — այս է իր անունը, — հիմայ Կօթանաստեղծութ տարու է, և իր տիրոջ մահէն երեսունը վեց տարի ետքը նորէն յուզմամբ ու երախտագիտութիւնով կը յիշէ անոր անունը: «Տաք տարիները զոր անցուցի իր քով, կ'ըսէ, կենացս երջանկագոյն տարիներն էին, վասն զի չէք գիտեր թէ ինչ բարեմոյն ու վեհանձն մարդ էր: Ո՛չ միայն մեծ բանաստեղծ մը, այլ և աղիւս սիրտ մը»: Ու արցունքի երկու կաթիլներ կը սահին ծերուկ կնոջ կմախտեալ այտերն ի վար:

Օր. Քօլէն՝ չահեկան տեղեկութիւններ տալէ ետք բանաստեղծին ներքին կեանքին, սովորութիւններուն, աշխատութեան եղանակին վրայ, — որոնց յիշատակութիւնը կրնայ հետուները տանիլ զմեզ, — սա սիրուն մանրագէպը կը պատմէ: Ինք իր գրով գրած էր տիրոջն էն գեղեցիկ մէկ կատակերգութիւնը, Քաճալէն, վասն զի Միւսէ մատը կտրած ըլլալով չէր կրնար գրիչ շարժել քանի մը օր ու տան վերակացուհին իբր քարտուղար աշխատացուցած էր: Զեւագիրը խօստացուած էր Քենթլի-Բիւֆֆէլի տնօրէն Տոքթ. Վէռօնի օր հինգ հազար ֆրանք վճարեց անոր հրատարակութեան իրաւունքին փոխարէն: «— Բայց շատ է այս գումարը, գոչեց Միւսէ, որ զրամական խնդիրներու մէջ յոյժ փափկանկատ էր:» — «Ընդհակառակը, պատասխանեց Վէռօն, դուք էք խաբուողը, քանի որ ձեռագիրը քովս կը պահեմ»: Երբ տուն դարձաւ, Միւսէ այս խօսակցութիւնը պատմեց վերակացուհիին, բայց յանկարծ խօսքն ընդմիջելով:

— Վա՛յ թշուառական, բոլորովին մոռցիր էի. ձեռագիրը քուկդ էր: Պէտք է ի-

մայ տամ այս պարագան:

—Ահալորդ յոգնութիւն, կը պատասխանէ Օր. Քօլէն, ուղղագրութեան սըխալներէն զիւրաւ պիտի հասկնայ:

* * *

Մեր հեղինակներն ու բանաստեղծները, որք զաղափար չեն ունեցած բնաւ ձեռագիր մը 5000 ֆրանքի ծախելու հաճոյքին վրայ, կարծեմ քիչ անգամ վայելած են նաեւ իրենց գրութեանը նոյն իսկ աղախինի մը ընդօրինակել տալու պերճանքը: Այս համեստ վիճակին կը պարտինք թեւեւ Պէշկիկթաշեանի ինքնագիր մէկ ոտանաւորը, — և անտիպ, եթէ չեմ սխալիր, — որ կուգայ խառնուիլ Մաֆիի թուղթերուն: Քանի մը տուլ միայն այդ քերթուած էն.

ՔԵՆԱՐ ԿՈՒՍԻՆ

Նստի ի մութ գիշեր ի բարձրադէտ բլրոյն կատար,
եւ զուրուականս ամպոց յեմեր հիւսիս վարէր
հալածական,
Մերն ընդ մերն փայլատակունք ցոլանային ի
հանդիպաց
Թուէր ոգւոյն ամպրոպաց զհրանշոյլ դէմ իւր
ցցուել
Բազմահոյլ իսկ յիմ ճակատ տատանէին ծուփ
խորհրդոց:

Քիչ մը վարը, գերեզմանաց բլրոյ մը նկարագրութեան մէջ:

Անդ խիտ առ խիտ նոցեաց շարք ամբառնային
նսեմաստուեր
եւ ուռենիք արտասուածորք սգալից ոտքն վայրահա,
Ոչ մի ծայն, ոչ մի շշուէ, մահ եւ մռայլ բազմին անդէն
Խուլ հնչիւն միայն հողմոց ընդ սօսափիւնս Խաւուտ ոստոց,
Յօրինէին եղերերզ, Թուէր մեռեալ ոգւոց մըրմունջ,
Կամ ողբոց ծայնակցութիւնք գերեզմանաց ի գերեզմանս:

Եւ ահա կը բացուին շիրիմները, վէմք կը թաւալին և ուրուականք կ'երեւին. ու Քերթնողուհի կոյսն կը նուագէ:

Կոյս զոր գեղ եւ փափկութիւն փայլայէին եւ գգուէին
Ում ցոլք երկնից զշողն ամբիծ եւ գիայլ իւրեանց
էին շնորհեալ

Եւ ծաղկունք զբոյր իւրեանց բոլոր նմա տուեալ
պարգեւ
Եւ սոխակ գիշերախօս զիւր ծայնիկ հոգեզուարճ
Ձի նագելի եւ զրգելի էր կոյսն համայն անմահ
ընութեան
Դարձեալ երգեաց, յանկասկած մութ դէմք երկնից
նից քայծառացան
Կոյս սփռեցաւ յանտառին, ի շող լուսոց փայլին
նոցիր
Ձուարթացան ուրուականքն, ելին ի պար բլորեցան
Եւ կոյսն երգէր. եւ ստուերն մտին իւրեանց
ի քնարանն
Եւ քնարն անոյշ՝ փափուկ կուսին դեռ որորէ
զբուն նոցա:

Նոյն երկիւղածութեամբ կը բանամ քառատարիկ ծալլուած այդ թուղթը, գեղնած, մաշած, տարիներու հետքէն ծակծկուած, ինչ երկիւղածութեամբ որ բացած էի առաջին անգամ Դուբեանին մէկ ձեռագիրը: Եւ, պիտի հաւատա՞ք, այնքան սերտ նմանութիւն մը երկու քերթողներու գրին միջեւ, մանրիկ, ամփոփ, սիրուն զիր մը, հանդարտ ու կանոնաւոր գրութեամբ: Ձեմ փորձուի՛ր պատրանք ունենալու, վասն զի ա'լ չեմ երեւակայեր բանաստեղծի մը գիրը՝ վերացական, զիւթական բան մը, որ սովորականներէն գերազանց երեւոյթ մը ունենայ, կա'մ շատ գեղեցիկ կամ շատ տգեղ. և այս համոզումս գոյացած է խմբագրական կեանքի առաջին տարիներու պատրանքներէն ետք, զորս կրած ենք ընկերներով, ամեն անգամ որ շողշողուն պահարանէ մը կը հանէինք մետաքսանման, փայլուն թերթ մը, մրցանակի արժանի գեղագրութեամբ որ կը պարունակէր, աւա՛ղ, էն անիմաստ ոտանաւորը կամ էն անյաջող արձակը. գրողներ եղած են, ու կը գրտնուին տակաւին, որք անոյշ բուրումնեւորով հրապուրիչ ընծայել կ'ուզեն իրենց յօդուածը, սիրային նամակի մը պէս, և կա'ն ալ որք սակեղօծ թուղթեր կ'ընտրեն, շլացունել ուզելով դատողին աչքը:

Պէշկիկթաշեանին ալ, Դուբեանի ոտանաւորին պէս, գրութեամբ է պարզ, աղքատիկ թուղթի մը վրայ, որ ունի սակայն բոյր մը, գերեզմանին շուրջը բուսնող ծաղիկներու բոյրը...

* * *

Գերեզմանի ծաղիկներն ամենէն աւելի սիրելիները չե՞ն միթէ բանաստեղծներուն, արուեստագէտներուն: Ասոր սըրտայոյզ մէկ ապացոյցը կուտայ այն մեծ արուեստագէտը, որ Վոսպորի ամերէն իր քաղել տուած ու ստացած ծաղկեփունջները մինչեւ Ակրոբոլիսի ստորոտը տաբաւ՝ դժբաղդ ամուսնայն-գերեզմանին նուիրելու: Յունական ոստանը մտնելուն, Սառա Պէռնաու իր առաջին պարտքը նկատեր է այցելել իր սիրելի Տամալային գերեզմանը, ուր արտասուեր և աղօթեր է: Եւ ամեն ներկայացման յաջորդ առաւօտուն առանձինն կրկներ է նոյն տխուր ուխտագնացութիւնը, այնքա՛ն յոյսերով ու հիւացումներով իրեն նուիրուած ծաղկեփունջերը տանելով խառնելով իր սիրական գերեզմանին վայրի ծաղիկներուն հետ: Ի դարձին այդ տխուր այցելութենէն, ի՛նչ կենդանի յուզմամբ կը կատարէր արդեօք հէ՞զ գերասանուհին իր դերն երիտասարդի մը հետ որ բեմին վրայ կը յաջորդէր անոր զոր լացած էր քիչ մը առաջ: Դերասանական կեանքի դառն մէկ կողմը, որ անծանօթ կը մնայ հասարակութեան, բայց որ կ'արիւնէ արուեստագէտին սիրտը:

* * *

Այս դառնութիւններէ մէկն ալ, — և սաստկագոյնը, — կրած է ատենօք՝ այն համակրելի գերասանապետը, որ յոգնիլ չգիտցող աւիւնով մը նորէն բեմին վրայ է հիմայ. ու բեմէն դուրս մանաւանդ, հայերէն ներկայացումներու կազմակերպման համար ունեցած նախաձեռնութիւնովն ու թափած ճիգերովն իսկ՝ պոսակի արժանի: Պատուեաճեան, — հա՞րկ է անունը տալ, — չեմ յիշեր ո՛ր թուականին Վլադիկաւկաս կը գտնուէր իր տիկնոջն ու խումբին հետ: Ծքեղ ներկայացման մը նախորդ երեկոյին, երբ համայն քաղաքը պատրաստուած է թատրոն երթալու, իրենց հիւանդ զաւակին վիճակը կը ծանրանայ. այր ու կին չեն յուսահատած. ամեն խնամք կը հասցնեն. ներկայացման ժամ մը մընալով, իւրե՛ծ պզտիկը հոգին կ'աւանդէ. նիւթապէս անհնարին է երեկոյթն յետաձգել. գերասանապետը՝ իբրեւ ծնողք իր

պարտքը կատարելէ ետք զաւակին մինչեւ վերջին շունչը, չ'ուզեր թերանալ իր արուեստագէտի պարտուցը մէջ. ու տուանց ձայն հանելու, արցունքնին սրբելով, այր ու կին զլիւիկոր կ'երթան թատրոն ու կը կատարեն իրենց դերերը, դիւրին է երեւակայել թէ ի՛նչ սրտով. կէս գիշերէն ետք, ծաղկեփունջերով բեռնաւորուած, կը դառնան տուն և մինչեւ արշալոյս լըռիկ կ'արտասուեն իրենց զաւակին մօտ: Առաւօտուն միայն գոյժը կ'իմացուի քաղաքին մէջ, և Վլադիկաւկասիք նոյնքան փառաւոր թաղում մը կը կատարեն հէզ տղուն՝ որքան փառաւոր ընծայած էին ներկայացումը: Այս հանրային համակրանքը կը մնայ միւրթարանք սգաւոր ծընողքին:

Բայց տխուր յիշատակներ արթնցնելու պէտք չունինք՝ գերասանապետին վերայ խօսելու համար: Զինքը շատ իսկ վշտացուցինք հին խաղի մը ներկայացմանն աւթիւ. հիմակ ալ, արդար ըլլալու համար, պէտք է ըսել թէ այդ զիպուածական ձախողութենէն կարի խրատուած է: Զեռքը ունի մինչեւ իսկ Պարոնեանի մէկ կատակերգութիւնը, Արեւելեան Արասա-Քոյժ, զոր կը վարանի ներկայացունել, ձեռնհասներու կարծիքն իմանալէ առաջ: Ողբացեալ երգիծաբանին տաղանդը խնդրոյ առարկայ չի կրնար ըլլալ. բայց դիտողներ եղեր են թէ այդ խաղը՝ իբր գըրուածք այնքան զբօսալի՝ բեմին վրայ գուցէ ահնկալուած տպաւորութիւնը առաջ չի բերէ: Քանի մը բարեփոխութիւններով սակայն, կրնայ այս կնճիռը հարթուիլ:

Ֆասուլեաճեան ինքն ալ խաղ մը գրած է, տեղական բարբերէ կատակերգութիւն մը, զլխաւորաբար Պոլիս հաստատուած ու տեղացի ընտանիքի մը հետ խառնուած գաւառացւոյ մը պատկերը, որուն Սիւլեջայ անունը տուած է: Առանց կանխակալ դատողութեան, կը մաղթենք որ յաջողութիւն գտնէ իր խաղն ալ, և հասարակութեան կողմէ այնպիսի ընդունելութիւն մը, որ գերասան-հեղինակը՝ այս երկու հանգամանքը միացուցած ըլլալուն չի զղջայ ու չի հարկադրի ըսել — «սխալեցայ»:

ՏԻԳՐԱՆ ԱՐՓԻԱՐԵԱՆ

Ա Ր Փ Ի Ն Է

Արդեօր շուշան գարնանային
Խէ պատկերն է լուսնկային.
Հո՞վ է մետաքս է մագին թել,
Ես չեմ կրնար գանազանել:

Իր բերանը բնորոշ՝ կըլոր,
Ծագկի բաժակ մ'է գոգաւոր՝
Երբ նա ծայնը ձգած սիրուն,
Կը սկըսի շարքն իր երգերուն:

Ու նուրբ՝ խաղտեալ յօնքերուն տակ
Խաղա-աչքերը թուի կապուտակ՝
Գոցըլին բացուին համեստօրէն
Մինչդեռ զինքը ծափահարեն:

Երբ պարտէզին մէջ կուգայ ման՝
Ճիչեր լսուին սրանչացման:
Սիրահարներ ծեր էէ տըհաս՝
Նուրբը շարուած կ'ընեն դարպաս:

Իր զիրգ ծնորին եղայ զերի
Որ պատուիկ մ'է համբուրի.
Բայց այն ծնորը չարածնի,
Զիս կ'ապտակէ առանց խղճի:

Մերկ սրբունգն չին՝ ցոյց տայ լիտի,
Ես կը սատտեմ՝ նա կը ժպտի.
Բայց ի՞նչ, կ'ուզէ՞ր որ ամաչէ,
Արփինէն՝ դեռ տասն ամսու չէ:

Մ. ԱՃԷՄԵԱՆ

ՇԱԲԹՈՒԱՆ ԼՈՒՐԵՐ

Ա Ջ Գ Ա Յ Ի Ն

Հինդչաբթի օրը, Ս. Փրկչեան Հիւանդանոցի տարեկուս-նաւազատիքի հանդէսին առթիւ, Ս. Պատրիարքը պատարագ մատուց Ս. Փրկչի մատուռին մէջ: Բաւական բազմութիւն ներկայ էր: Ս. Պատրիարքը քարոզ խօսելով բացատրեց Համբարձման տօնին նշանակութիւնը և յիշատակեց Հիւանդանոցին հիմնադիր Պէդճեան ամիրան և ուրիշ բարերարներ. քարոզը վերջացուց մալթանքներ ընելով վեհ. Սուլթանին արեւշատութեանը: Պա-

տարադէն ետք՝ հոգեհանգիստի պաշտօն կատարուեցաւ թէ՛ եկեղեցին և թէ՛ կիւղէնկեաններու դամբարանին վրայ: Բիշյետոյ, հացկերոյթ մը տրուեցաւ Ս. Պատրիարք Հօր նախագահութեամբ. ներկայ էին 150ի չափ եկեղեցական ու աշխարհական ազգայիններ: Զանազան բաժակներ առաջարկուեցան: Հացկերոյթէն ետք Մոստիշեան Յարութիւն Էֆէնտի թուրքերէն ճառ մը արտասանեց, որ ծափահարուեցաւ: Ապա, Ս. Պատրիարքը, ներկայներէն չըջապատուած, հիւանդանոցին հիւրանոցը գնաց, ուր կարդացուեցաւ համառօտ տեղեկագիր մը: Յաւարտ հանդէսին, Ն. Ամենապատուութիւն Մաքրի գիւղ գնաց: Երկու հազար երեք հարիւր զրուչի չափ նպաստ մը եղաւ հիւանդանոցին, զանազան անձերու կողմէ:

— Իմիտիադի ոսկի չքաղրամ տրուեցաւ՝ Բաղաբական ժողովին ատենապետ Վսեմ Մաքսուտ Սիմոն Պէյի՝ ի վարձատրութիւն իր հաւատարմական ջանքերուն և ծառայութիւններուն:

— Դատաստանական խորհուրդին կողմէ պատրաստուած դատաւարական օրէնքի հրահանգն, որ Պառն ժողովին կողմէ վաւերացած էր, տպագրուելէ ետք գործադրութեան պիտի դրուի:

— Պառն ժողովն ընդունած ըլլալով Տ. Մեղքիսեդեկ եպիսկոպոսի հրաժարականն Տիգրանակերտի առաջնորդութենէ, տեղւոյն քահանաներէ մին առաջնորդական տեղապահի պաշտօն պիտի վարէ՝ մինչեւ որ նոր առաջնորդ ընտրուի:

— Կեդրոնական վարժարանի խնա՛ւակաւութիւնը, վարժարան յաճախող դաւառացի տղաքներուն դիւրութիւն մը ընծայելու համար, որոշած է, տարեկան 26 օսմ. ոսկիի վճարումով, ստանձնել անոնց բնակութեան և սնունդի հոգը:

— Հիւանդանոցի ներքին կանոնադրին, զոր վերջերս վաւերացուց Ազգ. վարչութիւնը, 111րդ յօդուածը կը տրամադրէր որ Հիւանդանոցը երկու մնայուն բժիշկ ունենայ: Հիւանդանոցի հոգաբարձութիւնը նամակով մը խնդրած է Ս. Պատրիարքէն փոխել այդ յօդուածը սա կերպով

թէ փոխանակ երկու մնայուն պետի, Հիւանդանոցը երկու այցելու բժիշկ ունենայ:

—Ս. Պատրիարք Հայրը մերժած է Ամերիկայի հայ գաղթականութեան հոգեւոր հովիւ Տ. Սարաճեան վարդապետին հրաժարականը:

—Հրեայ աղջիկ մը կրօնական ժողովին դիմելով փափագ յայտնած է Քրիստոնէութիւնն ընդունիլ և Հայոց եկեղեցիի գիրկը մտնել: Կրօնական ժողովը իր հաւանութիւնը չէ տուած այս առաջարկին:

Ն Ե Ր Ք Ի Ն

Կարինի ու շրջակայներուն մէջ տիրող երաշտութեան պատճառով աղքատ ժողովուրդը դժուարութեանց մատնուած ըլլալով իր ապրուստի հայթայթման մասին, կուսակալութիւնը ազդու միջոցներ ձեռք առած է: Ծրճակայ նահանգներէն ալ օգնութիւնը կ'ըլլան: Ամասիայէն 650,000 օխա ալիւր կը զրկուի Կարին:

—Սպարապետի դուռը հրահանգ ուղղած է ամեն կողմ տեղեկագրել՝ նահանգաց մէջ քաղաքային պաշտօնեայնէրու տըրամադրութեանը տակ, դատական ու թղթատարական գործերու ինչպէս նաեւ այլ և այլ պահականոցներու մէջ պաշտօնավարող հեծեալ ու հետեակ ոստիկան-զինուորներու ու անոնց սպայներու թիւը:

—Առեւտրական օրէնքին համաձայն կայս. կառավարութիւնը պէտք է կնքէ և թուահամարներ դնէ վաճառականաց հաշուետուարներուն վրայ: Դատական նախարարութիւնը նկատելով որ օրինաց այդ տրամադրութիւնն ամբողջովին չի գործադրուիր, բացատրութիւններ ուղած է Պոլսոյ Առեւտրական սենեակէն ի մասին այն միջոցներուն որք ձեռք պիտի առնուին որպէս զի վաճառականք օրինաց սահմանին մէջ կատարեն իրենց գործառնութիւնները:

—Վեհ. Սուլթանը 50 ոսկի շնորհեց Սոփիայի և Քէօսդէնտիլի իսլամ ժողովըրդին կարօտեալներուն բաշխուելու համար: Այդ գումարէն 30 ոսկին Սոփիայի և քսանն ալ Քէօսդէնտիլի աղքատ իսլամներուն

բաշխուած ըլլալով, բարեմաղթութիւններ եղան Վեհ. Սուլթանին տրեւտաութեան համար:

—Կայս. Իրատէի մը համաձայն, անցած տարուան պէս այս տարի ալ աստուածաբանութեան ուսանողները ազատ պիտի մնան զինուորական ծառայութենէ:

—Կ. Պոլսոյ ցուցահանդէսին կազմակերպութեան ծախքերուն համար Մախսուսէի վարչութեան առմանկներուն վրայ դրուած յաւելուածական տուրքէն տարեկան 300,000 դրուչի գումար մը պիտի գոյանայ:

—Հանրային Պարտքի հասոյթները ապրիլ ամսուան մէջ 12,000 ոսկիի չափ պակաս եղած են: Այս նուազումին պատճառ ցոյց կը տրուի գաւառներէն հասնելիք գումարներուն ուշ մնացած ըլլալը:

—Մուսթաֆա Բէշիտ պէյ, թուրք դրականութեան նոր դպրոցէն նշանաւոր դրագէտ մը, Բերայի կեանքէն հրատարակած է վէպ մը, որուն վրայ գովեստով կը խօսին:

—Թղթատարական և Հեռագրական վարչութիւնը որոշեց աւելցնել Պոլսոյ, Ղալաթիոյ, Բերայի թղթատարաց և հեռագրատան պաշտօնեայնէրու թիւը: Ընդհանուր տնօրէն Հասան Ալի էֆէնտիի նախադահութեան ներքեւ յանձնաժողով մը կազմուած է, խորհելու համար հասութի նորանոր միջոցներու վրայ, որոնցմով պիտի գոյուին բացուելիք ծախքերը:

—Հեռագրական գծերուն երկարաճը գումը կը շարունակուի Ենմէնի մէջ: Կ. Պոլսէն 3,000 երկաթէ ձող ապսպրուեցան հեռագրական թելերուն համար: Ծիւնութեան վրայ եղող ճամբաներուն մէկ մասը աւարտած է. ոչխատութիւնք առաջ կը տարուին մնացածներն ալ աւարտելու համար:

—Ապրիլ 19էն մայիս 3 ի Սաքըղ (Պարսկաստանի մէջ) քուլերայի ութը դէպք պատահեր է, և 6 դէպք ալ Դավրէթի շրջակայ գիւղերը:

Ա Ր Տ Ա Ք Ի Ն

Յունաստանի նոր նախարարութիւնը կազմեց Պ. Սողիոբուլոս, ինքն ստանձ-

նելով նաեւ երմտական նախարարի պաշտօնը, քանի որ փոխադրւեալն ինչդիրն ամենէն մեծ խնդիրն է Յունաստանի: Պ. Ռալլի արտաքին գործոց, Պ. Քորբա ներքին, Պ. Քանարիս ծովային գործոց նախարար անուանուած են:

—Սպանիոյ երմտական նախարարը ծանուց երեսփ. ժողովին թէ խնամակալ թագուհին իր տարեկան ֆոնդէն մէկ միլիոն ֆրանք թողած է հանրային գանձին: Ժողովն եռանդազին ծախահարութեամբ ընդունեց այս առատաձեռնութեան լուրը:

—Սկովտիոյ մէջ պետական եկեղեցիին (Երիցական) ջնջումն 180ի դէմ 246 ձայնով քուէարկեցաւ անցեալ երեքաբար յերեսփ. ժողովէն, ազատականներու պահանջումով:

—Անգլիոյ Երեսփ. ժողովը վերջնապէս քուէարկեց Ա. և հիմնական յօդուածն կառավարական գլխաւոր ծրագրին, արմատականներու այն յայտարարութեամբ թէ Լոնտոնի խորհրդարանին գերիշխանութիւնն անվտար պիտի մնայ:

—Կ'ըսուի թէ Պրլամար իշխան խօսակցութեան մը մէջ ըսեր է. «Ո՛չ այս Բայթապալը, ո՛չ յառաջիկայ Բայթապալը, ո՛չ ալ գալիքը պիտի ընդունին Քափրիվիի զինուորական օրինագիծը, առանց խորին փոփոխութեանց:»

—Ջարը մօտերս Սեվասթոպոլ նաւահանգէս մը պիտի տայ Սեւ ծովի ուստական նաւատորմին:

—Զօրավար Տոտս, Տահովի արաւանքին յաղթական զինուորը, ի Մարտիլա և Բարիլ գտած փառաւոր ընդունելութեամբը մուցած ըլլալու է իր քաջութիւնը տառապանքները: Մարտիլայ ժողովուրդը խանդավառ ընդունելութիւն բրաւ իրեն:

—Ամերիկայի մէջ Միլիտերի գետին վրայ Օհէ չոգենաւին կաթան պայթեցով 6 նաւատի և ուղեւոր մը ողջ ողջ այրեր են. 5 սեւամորթ մեռեր և 16 հոգի ծանրապէս վիրաւորուեր են:

—Պրլամիտի ջրանցքին վրայ, Ռենտի մօտ, երկու անգլիական չոգենաւ իրար դարնուեցան: Գառաւիժն ի վէճն ընկղմեցաւ. 8 ուղեւոր և 16 նաւատի վորսուեցան:

—Առաջիկայ կիրակի պաշտօնական մեծ հանգէս մը պիտի կատարուի Փէթտի մէջ: Յիշատակարան մը կառուցուած է ի յիշատակ մահաւ զինուորներուն որք մեռած են 1848 ի և 1849ի պատերազմներուն մէջ, և անոր բացումը պիտի ըլլայ: Երեսփ. ժողովն իր ատենապետին առաջարկութեամբ որոշած է որ այս մահաւ զինուորներու յիշատակին յարգանք ցուցնելու համար իր կողմէ պատգամաւորութիւն մը ներկայ ըլլայ հանգէսին, առաջնորդութեամբ ատենապետին, որ պըսակ մը դնէ յիշատակարանին պատուանդանին վրայ: Մեծ պարատուութիւն կայ հանգէսն յոյժ փայլուն ընելու, գործակցութեամբ պաշտօնական և ոչ-պաշտօնական դասերու:

—Պուկարական սահմանադրութեան մէջ առաջարկուած բարեփոխումները վաւերացնելու համար ընտրուած Սոպրանին հանդիսաւոր նիստ ըրաւ իշխանին և իշխանուհիին ներկայութեանը և 555 քուէով ատենապետ ընտրեց Պ. Փէթթով:

—Թայէ կ'ըսէ թէ 11 շաբաթէ ի վեր տիրող երաշտութիւնը պիտի կործանէ շատ մը անգլիացի երկրագործներ:

—Պաշտօնական տեղեկութիւնները կը հաստատեն թէ Բոտալիոյ մէջ 8,223 հոգի քուերայէ բռնուեր են, որոնց 2,866ը մեռեր են: Առողջապահական վիճակին մէջ ո՛ր եւ է բարելաւութիւն չնշմարուիր:

ՄԵՐ ԳՈՐԾԱԿԱՆՆԵՐԸ

Ազրբայճան	ՄԱԳՅՈՒՏ	ԷՖ. ՍԱՆՏԱՆԵԱՆ
Զմիւռնիա	ԿԱՂԴՆՏ	ՄԱ. ԷՃԱՆԵԱՆ
Խաղթի	ԽՈՒՐԷՆ	ԶԱՐԴԱՐԵԱՆ
Կիւստան	ՅԱՐՈՒԹԻՆ	ՄՈՒԹԱՅԵԱՆ
Մակարա	ՍՐՏԱՆԷՍ	ՅԱՐՈՒԹԻՆԵԱՆ
Նիկոմիդիա	ՄԻՆԴԱՆ	ՍԹԱՆԱՍԵԱՆ
Ռոտումօ	ՏՕԲԹՕՐ	ՆԵՎՐՈՒԶԵԱՆ
Տրապիզոն	ՅԱԿՈԲ	ՇԱԽԱՆ

ԱՐՏՈՆԱՏԻՐ

1. Ս ԻՓԻԻՃԵԱՆ

Ի Տպարանի ԱՐԵՒԵԼԻ ԵՆ ՄԱՍԻՍ Լրագրաց